

PEARLS OF ARMENIAN HERITAGE

ԵՂԻՉԷ ՎԱՐԴԱՊԵՏ (ՇՈՒՐՋ 410 - 470)

Սուրբ Սահակ Յայրապետին եւ Սուրբ Մեսրոպի կրտսեր աշակերտներու խումբին կը պատկանի Եղիշէ Վարդապետ. Մովսէս Խորենացիին դասընկեր եղած է:

Յայսմաւորքներէն ոմանց համաձայն՝ Եղիշէ սկսած է իր արքունի ծառայութեան ընթացքը որպէս դպիր Յայոց բանակին մէջ, Վարդան Մամիկոնեան զօրավարին հրամանատարութեան տակ: Ծառայութեան աւարտին ընտրած է միանձնական կեանք՝ Մոկք գաւառին մէջ, ուր գրած է իրեն ընծայուած երկերը: Վախճանած է փետրուար ամսուն 27-ին, սակայն մահուան տարեթիւը չէ արձանագրուած: Ուրիշ Յայսմաւորքներու համաձայն՝ Եղիշէ Վարդապետ ազգական կը համարուի Վարդան Մամիկոնեանի, եւ ոմանք զինք կը նոյնացնեն 449-ին Արտաշատի ժողովին մասնակցած Եղիշէ Ամատունեաց եպիսկոպոսին հետ:

Եղիշէ Վարդապետին անունով մեզի հասած են հետեւեալ մեկնողական գործերը եւ քարոզները.

- Մեկնութիւն Արարածոց
- Մեկնութիւն Յետուայ եւ Դատաւորաց
- Մեկնութիւն Յայր Մեր աղօթքին
- Բան Խրատու յաղագս Միանձանց
- Յաղագս Վարուց Կենաց Տեսականի
- Ի Թափորական Լերին Յայտնութիւն Տեառն առ Պետրոսեանս
- Ի Մկրտութիւն Քրիստոսի
- Ի Չարչարանս Տեառն
- Վասն Դատաստանին եւ Միսանգամ Գալստեան
- Վասն Յիշատակաց Մեռելոց
- Կանոններ

Իր գլխաւոր գործը, սակայն, է “Վասն Յայոց Պատերազմին” երկը, ուր բազմաթիւ տեղեր հեղինակը կը ներկայանայ որպէս ականատես իր պատմածներուն: Մեր գրականութեան այս հրաշալիօրէն գեղեցիկ գոհարը՝ պարզ պատմական գործ մը ըլլալէ աւելի դիւցազներգական զգայնութեամբ վկայաբանութիւն մըն է, որուն մէջ շեշտուած է դէպքերուն կրօնական եւ անձերուն հոգեւոր բնոյթը: